*Լրամշակված փարբերակ*

**Երկրորդ ընթերցում**
**Նախագիծ**

**Կ-1038[1]-18.07.2016-ՖՎ-010/2**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** *Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական Օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 190.1-ին հոդվածով՝*

«ՀՈԴՎԱԾ 190.1. ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

1. Ինսայդերի կողմից դիտավորությամբ ներքին տեղեկությունների հիման վրա իր կամ այլ անձի հաշվին արժեթուղթ կամ դրա հետ կապված ածանցյալ գործիք գնելը կամ վաճառելը, կամ ներքին տեղեկությունների ապօրինի տրամադրումը երրորդ անձանց, որի արդյունքում ստացել է զգալի չափով շահույթ՝
պատժվում է տուգանքով՝ **նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երկուհազարապատիկի չափով** կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝
1) որի արդյունքում ստացել է խոշոր չափի շահույթ,
2) որը կատարվել է մի խումբ անձանց կողմից՝
պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ չորսից յոթ տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝
1) որի արդյունքում ստացել է առանձնապես խոշոր չափի շահույթ,
2) որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից
3) որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածում և սույն օրենսգրքի 190.2-րդ հոդվածում զգալի չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկը գերազանցող գումարը *(արժեքը)*:

*Սույն հոդվածում և սույն օրենսգրքի 190.2-րդ հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):*

*Սույն հոդվածում և սույն օրենսգրքի 190.2-րդ հոդվածում առանձնապես խոշոր չափ է համարվում նվազագույն աշխատավարձի քառասունհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):»:*

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 190.2-րդ հոդվածով՝

«ՀՈԴՎԱԾ 190.2. ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

1. *«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4 կետերով նախատեսված արարքներից որևէ մեկի կատարումը,* որը առաջացրել է զգալի չափով վնաս՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի **երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով** կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) առաջացրել է խոշոր չափի վնաս,

2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ հինգ յոթ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) առաջացրել է առանձնապես խոշոր չափի վնաս,

2) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,

3) կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ», «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Հ/Հ | **Առաջարկության հեղինակը** | **Առաջարկության բովանդակությունը** | **Եզրակացություն** | **Կատարված փոփոխությունը** |
|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ կառավարություն | 1.«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝<br>ա) 5-րդ հոդվածում «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթները, իսկ «տեղեկատվություն» բառը փոխարինել «տեղեկություն» բառով՝ նկատի ունենալով «Արժեթղթերի շուկայի | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն | **Հոդված 5.** Օրենքի 161-րդ հոդվածի 3-րդ մասում՝ «տիրապետող» բառից հետո *լրացնել՝* «այդ թվում՝ հանցագործության արդյունքում ձեռք բերված ներքին *տեղեկություն* տիրապետող» բառերը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մասին» ՀՀ օրենքի 161-րդ հոդվածի դրույթները: | | |
| | | բ) 6-րդ հոդվածում «օրենսդրությանը» բառը փոխարինել «օրենքը» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի դրույթները: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն | **Հոդված 6.** Օրենքի 209-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.<br><br>«3. Սույն օրենքի 162-րդ հոդվածի և 171-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված գործողությունների կատարումը ֆիզիկական անձանց նկատմամբ առաջացնում է սույն օրենքով նախատեսված պատասխանատվություն, եթե այդ գործողությունները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում՝ գործող *օրենքի* համապատասխան:»: |
| | | գ) 7-րդ հոդվածից հանել «3.4» թիվը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիշյալ հոդվածում բացակայում են լրացվող 3.4-րդ կետի դրույթները: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն | **Հոդված 7.** Օրենքի 211-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3.1, 3.2, 3.3, 6, 7 և 8-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. |
| | | դ) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն «Հոդված 2» բառերը փոխարինել «Հոդված 8» բառերով: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն | ***Հոդված 8.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: |
| | | 2. «Հայաստանի | Ընդունվել է: | ***Հոդված 1.*** *Հայաստանի* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝<br>ա) 1-ին հոդվածում ՀՀ քրեական օրենսգրքին արված հղումը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածի դրույթներին, իսկ հոդվածի 4-6-րդ մասերը «գումարը» բառից հետո լրացնել «(արժեքը)» բառով:<br><br>2. «Արժեթղթերի շուկայի | Կատարվել է համապատասխան փոփոխություն | *Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական Օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 190.1-ին հոդվածով՝*<br><br>Սույն հոդվածում և սույն օրենսգրքի 190.2-րդ հոդվածում զգալի չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկը գերազանցող գումարը *(արժեքը)*:<br>*Սույն հոդվածում և սույն օրենսգրքի 190.2-րդ հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):*<br>*Սույն հոդվածում և սույն օրենսգրքի 190.2-րդ հոդվածում առանձնապես խոշոր չափ է համարվում նվազագույն աշխատավարձի*<br><br>*Կենտրոնական բանկը* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 102.1 հոդվածի՝<br><br>Ա. 2-րդ մասում կատարել խմբագրական փոփոխություն՝ հանելով «բացառապես» բառը:<br><br>Բ. 8-րդ մասում կատարել խմբագրական փոփոխություն: | Ընդունելի է: Կատարվել է խմբագրական փոփոխություն՝ տեքստն առավել հստակ դարձնելու նպատակով:<br><br>Ընդունվել է: Դրույթը խմբագրվել է՝ տեքստն առավել հստակ դարձնելու | *սեփական նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա օրենքով սահմանված կարգով փոխանակում է տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր), այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող (բացառությամբ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական և ծառայողական գաղտնիքի) տեղեկություններ օտարերկրյա պետության իրավասու մարմինների հետ, որոնք միջազգային պայմանագրից կամ համագործակցության պայմանագրից բխող պարտականությունների հիման վրա ապահովում են տեղեկությունների համարժեք գաղտնիություն և այդ տեղեկություններն օգտագործում են արժեթղթերի շուկայի կարգավորման, վերահսկողության, արժեթղթերի շուկայում չարաշահումների դեմ պայքարի կամ արժեթղթերում ներդրողների շահերի պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցության նպատակով:*<br><br>*Արժեթղթերի շուկայի չարաշահումները կանխելու կամ քննելու, ինչպես նաև* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | նպատակով: | *միջազգային պայմանագրով կամ համագործակցության պայմանագրով նախատեսված դեպքերում փոխանակման ենթակա տեղեկությունները (այդ թվում՝ փաստաթղթերի և (կամ) դրանց պատճենները) ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը համագործակցում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ, որոնք Կենտրոնական բանկի գրավոր դիմումի հիման վրա տրամադրում են անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:»:* |
| 2. | ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ՝<br>Գ. Մինասյան<br>Գ. Մելիքյան | բ) 190.2 հոդվածի 1-ին մասում նշված է, որ պատժելի է արժեթղթերի շուկայում գնային չարաշահումը, որն առաջացրել է զգալի չափով վնաս, մինչդեռ նկարագրված չէ, թե որ արարքներն են համարվում գնային չարաշահում, այսինքն՝ հանցակազմի տարր հանդիսացող օբյեկտիվ կողմը բավարար չափով նկարագրված չէ: Առաջարկում ենք՝ | Ընդունելի է: | Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն, մասնավորապես՝ նախագծի 190.2 հոդվածում հղում է կատարվել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ա. Կամ հղում տալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին և միաժամանակ խմբագրել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 171-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ուժը կորցրած ճանաչելով 2-րդ մասի 5-րդ կետը, քանի որ քրեորեն պատժելի չի կարող լինել որևէ արարքի նույնաբնույ արարքը.<br>Բ. Կամ 190.2 հոդվածում հստակ թվարկել այն արարքները, որոնք համարվում են գնային չարաշահում՝ հաշվի առնելով նաև «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները, քանի որ ՀՀ Կենտրոնական բանկին հնարավորություն է ընձեռնված սահմանելու այն դեպքերը, որոնք գնային չարաշահում չեն հանդիսանում: | | |